«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
Բաժնետերերի հերթական ընդհանուր ժողով գումարելու մասին
ՃԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի Բաժնետեր,

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (գտնվելու վայրը՝ Հայաստան, 0014 Երևան, Ազատության պողոտա, 24/1, այսուհետ՝ Ընկերություն) տնօրենների խորհուրդը «18» մայիս 2026թ. կայացած նիստում ընդունել է հեռակա կարգով քվեարկությամբ Ընկերության բաժնետերերի տարեկան (հերթական) ընդհանուր ժողով (այսուհետ՝ Ժողով) գումարելու մասին որոշում.

- Ժողովը գումարվում է 2026 թվականի հունիսի 30-ին,
- Ժողովը անցկացվելու է հեռակա կարգով,
- Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է «18» մայիս 2026 թվականին, Ընկերության բաժնետերերի ռեեստրից տրված քաղվածքի հիման վրա:
- Ժողովի օրակարգն է՝
    1. Ընկերության 2025 թվականի տարեկան հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվությունը հաստատելու հարցը,
    2. Ընկերությունում 2025 թվականի արդյունքներով շահույթի բաշխում իրականացնելու հարցը,
- Բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը (այսուհետ՝ Ցանկ) հետևյալն է՝
    1. Ժողովի գումարման մասին ծանուցումը,
    2. Տեղեկատվություն Ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,
    3. Քվեաթերթիկ՝ օրակարգի հարցերի վերաբերյալ,
    4. Ժողովի հաստատմանը ներկայացվող փաստաթղթերի նախագծերը,
    5. Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Ընկերության վերստուգողի և Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:
- Ցանկով սահմանված տեղեկությունները և նյութերը ներկայացված են https://www.telecomarmenia.am հասցեով Ընկերության ինտերնետային կայքի «Ընկերության մասին» բաժնի, «Բաժնետերերին» ենթաբաժնում, իսկ Ցանկի 1-ից 3-րդ կետերով սահմանված փաստաթղթերն ուղարկվում են նաև պատվիրված նամակով:

Հարցերի դեպքում բաժնետերերը կարող են դիմել Ընկերությանը՝ ուղարկելով նամակ info@telecomarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին:

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝

ՀԱՅԿ ԵՍԱՅԱՆ **«21» մայիսի 2026 թ.**